YEREVAN STATE UNIVERSITY

BOARD OF TRUSTEES

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
СОВЕТ ПОПЕЧИТЕЛЕЙ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

№ 015 «31» հունվարի 2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2020թ. հունվարի 31-ին տեղի ունեցած թիվ 15 նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 26-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Նիստը նախագահում էր Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը, իսկ քարտուղարում՝ Խորհրդի քարտուղար Գրիգոր Հայրապետյանը:

ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում օրակարգային 6 հարցով տեղի ունեցավ Խորհրդի թիվ 15 նիստը: Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը ողջունեց ներկաներին, շնորհակալություն հայտնեց իրավերն ընդունելու ու նիստին մասնակցելու համար և հայտարարեց քվեակազմի առկայության մասին: Խորհրդի նախագահն առաջարկեց նիստի օրակարգում ավելացնել մեկ հարց, որը վերաբերում էր ԵՊՀ ԻՄ կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելուն: Գ.Մուրադյանը ներկայացրեց, որ ԵՊՀ իրավական կարգավիճակը ՊՈԱԿ-ից (Պետական ոչ առևտրային կազմակերպություն) հիմնադրամի անցնելիս բաց է թողնվել ԵՊՀ ԻՄ կանոնադրության և տնօրենի ընտրության կանոնակարգի համապատասխանեցման հարցը: Գևորգ Մուրադյանի առաջարկը դրվեց քվեարկության. Կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Արդյունքում նիստի օրակարգում ավելացավ մեկ հարց՝ ԵՊՀ ԻՄ կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը:

Խորհրդի նախագահը քվեարկության դրեց նիստի օրակարգը. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայների հարաբերակցությամբ նիստի օրակարգը ընդունվեց հետևյալ հարցերով.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի հաստատում,
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարում,
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը,

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության կանոնակարգի հաստատում,
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարում,
6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019թ. աուդիտի պայմանների հաստատում:

1. Նիստի օրակարգի առաջին հարցը վերաբերում էր **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի հաստատմանը:** Խորհրդի նախագահը նշեց, որ ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի վերամշակման հետ կապված խոսվել է նախորդ նիստի ընթացքում և ստեղծվել է հանձնախումբ: ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի վերամշակման հարցը քննարկվել է ինչպես հանձնախմբի անդամների, այնպես էլ իրավաբանների հետ: Ստացվել են առաջարկություններ Խորհրդի անդամների կողմից: Գևորգ Մուրադյանը Խորհրդի անդամներին ներկայացրեց ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի վերամշակման հետ կապված առաջացած խնդիրները, կատարված փոփոխությունները և այն փոփոխությունները, որոնք ցանկալի էին, սակայն չեն կատարվել: Խորհրդի նախագահը նշեց, որ կան սահմանափակումներ ոչ միայն ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգով, այլ նաև՝ ԵՊՀ կանոնադրությամբ պայմանավորված: Այդ պատճառով, շատ տրամաբանական փոփոխություններ, որոնք առաջարկվել են, օրինակ՝ Խորհրդի անդամ Հովհաննես Հովհաննիսյանի կողմից առաջարկած ղեկավար/վարչական փորձի առկայությունը, այս պահին չենք կարող ներառել, քանի որ այդ սահմանափակումներն առկա են ԵՊՀ կանոնադրության մեջ: Կանոնադրությունն իրավական առումով ավելի բարձր մակարդակ է, քան կանոնակարգը և հետևաբար կանոնակարգի մեջ չի կարող լինել ավելի խիստ սահմանափակումներ, քան սահմանված է կանոնադրությամբ: Հետևաբար ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի վերամշակման ընթացքում դա համապատասխանեցվել է ԵՊՀ կանոնադրության հետ: Ավելին, ի տարբերություն ԵՊՀ ԻՄ կանոնադրության, որը քննարկում և հաստատում է Խորհուրդը, ԵՊՀ կանոնադրությունը հաստատում է կառավարությունը: Այնուհետև Խորհրդի նախագահը թվարկեց հիմնական փոփոխությունները, որոնք կատարվել են կանոնակարգում: Անդրադառնալով առաջարկություններին, Խորհրդի նախագահը նշեց, որ արդեն ներկայացրեց Խորհրդի անդամ Հովհաննես Հովհաննիսյանի առաջարկության պատասխանը, Խորհրդի անդամ Սմբատ Գոգյանի առաջարկությունները քննարկվել են և կան համապատասխան պատասխանները, իսկ Խորհրդի անդամ Արտաշես Թորոսյանի առաջարկը «կատարել ռեկտորի ընտրության ժամկետի հաշվարկը գործընթացի սկզբից» կքննարկվի հետագայում: Վերոնշյալ պարզաբանումները ներկայացնելուց հետո Գևորգ Մուրադյանը ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի վերամշակված տարբերակի հաստատման հարցը դրեց քվեարկության. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 2-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան»

հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարում:** Անդրադառնալով ԵՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարման հարցին՝ Խորհրդի նախագահն առաջարկեց ԵՊՀ ռեկտորի ընտրությունն անցկացնել ս.թ. մարտի 27-ին: Գևորգ Մուրադյանը նշեց, որ նաև պետք է հայտարարվի մրցույթ ԵՊՀ ԻՄ տնօրենի թափուր պաշտոնի համար և եթե ԵՊՀ ԻՄ տնօրենի ընտրության անցկացման օր նշանակվի ս.թ. մարտի 16-ը, իսկ ԵՊՀ ռեկտորի ընտրության անցկացման օր ս.թ. մարտի 27-ը, ապա 10 օրվա մեջ հնարավոր կլինի Խորհրդի երկու նիստի գումարման համար լուծել տեխնիկական խնդիրները: Խորհրդի անդամ Արթուր Վաղարշյանն առաջարկեց մեկ շաբաթ շուտանցկացնել ԵՊՀ ռեկտորի ընտրությունը՝ հիմնավորելով, որ ապրիլի 1-ին կառավարության որոշմամբ ավարտվում են Խորհրդի լիազորությունները, իսկ ս.թ. մարտի 27-ին ԵՊՀ ռեկտորի ընտրություն անցկացնելու դեպքում հնարավոր է, որ թեկնածուները շատ լինեն, և գործընթացը երկարի: Ծավալվեց քննարկում, որի արդյունքում որոշվեց ԵՊՀ ռեկտորի ընտրությունն անցկացնել ս.թ. մարտի 23-ին: Խորհրդի նախագահը հարցը դրեց քվեարկության. կողմ՝ 25, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 2-րդ ենթակետով՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:
2. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարին հանձնարարել ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրությունն անցկացնել 2020թ. մարտի 23-ին:

3. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իշխանի մասնաճյուղի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը:** Ներկայացնելով հարցը՝ Խորհրդի նախագահն առաջարկեց ԵՊՀ ԻՄ կանոնադրության 30-րդ կետում ավելացնել 3 տարվա ղեկավար/վարչական փորձ ունենալու պահանջը: Խորհրդի անդամ Ռոբերտ Սուքիասյանը հարցրեց, թե որն է 3 տարվա ղեկավար/վարչական փորձի սահմանման անհրաժեշտությունը կամ նպատակահարմարությունը ԵՊՀ ԻՄ տնօրենի համար, եթե ԵՊՀ ռեկտորի համար այդպիսի պահանջ չի սահմանվում: Խորհրդի նախագահը նշեց, որ հնարավորության դեպքում կարելի է նաև սահմանել 5 տարվա ղեկավար/վարչական փորձի առկայություն: Ավելին, մեկ անգամ ևս անդրադարձավ այն հարցին, որ ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգում չի կարող լինել ավելի խիստ սահմանափակում, քան սահմանված է ԵՊՀ կանոնադրությամբ, իսկ ԵՊՀ կանոնադրության

փոփոխությունը պահանջում է կառավարության որոշում: ԵՊՀ ԻՄ կանոնադրության պարագայում Խորհուրդն ունի իրավասություն դրանում կատարելու փոփոխություններ և լրացումներ: Ծավալվեց քննարկում, արդյունքում Խորհրդի նախագահն առաջարկեց ԵՊՀ ԻՄ կանոնադրությունը թողնել ինչպես որ կա և փոփոխություն կատարել ԵՊՀ ԻՄ տնօրենի ընտրության կանոնակարգի մեջ համապատասխանեցնելով այն կանոնադրության հետ:

4. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության կանոնակարգի հաստատում:** Այս հարցի շրջանակներում Խորհրդի նախագահը նշեց, որ ԵՊՀ ԻՄ տնօրենի ընտրության կանոնակարգը պետք է համապատասխանեցնել ԵՊՀ ԻՄ կանոնադրությանը, այսինքն **«**3 տարվա ղեկավար աշխատանքի փորձի**»** պահանջը կանոնակարգից պետք է դուրս գան ավելացվի «դոցենտ կամ պրոֆեսոր, որն ունի գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան»: Գևորգ Մուրադյանը ԵՊՀ ԻՄ տնօրենի ընտրության կանոնակարգի հաստատման հարցը դրեց քվեարկության. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 8-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 8-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

5. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարում:** Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը առաջարկեց ԵՊՀ ԻՄ տնօրենի ընտրությունն անցկացնել ս.թ. մարտի 16-ին: Ծավալվեց քննարկում, որի ընթացքում Գևորգ Մուրադյանը ներկայացրեց որոշակի տեխնիկական խնդիրներ և հարցը դրեց քվեարկության. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:

Որոշվեց.

Ղեկավարվելով Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի Հոդված 15-ի 6-րդ կետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 8-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 8-րդ ենթակետով՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:

2. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարին հանձնարարել ԵՊՀ ԻՄ տնօրենի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրությունն անցկացնել 2020թ. մարտի 16-ին:

6. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019թ. աուդիտի պայմանների հաստատում:** Անցնելով օրակարգային վերջին հարցին՝ Խորհրդի նախագահ Գևորգ Մուրադյանը նշեց, որ ներկայացված աուդիտի պայմաններում տեխնիկական վրիպակ կա, որը պետք է հանել, քանի որ դա չի վերաբերում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին: Ավելին, նա ներկայացրեց, որ արդյունավետության բարձրացման տեսանկյունից կան որոշակի խնդիրներ կապված իրավական կարգավորումների հետ, որոնք պահանջում են համապատասխան փոփոխություններ և հաստատման ներկայացված հարցը տեխնիկական բնույթի հարց է: Ծավալվեց քննարկում, հնչեցին կարծիքներ ու առաջարկություններ: Խորհրդի նախագահը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019թ. աուդիտի պայմանների հաստատման հարցը դրեց քվեարկության. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 9-րդ ենթակետով, 140-րդ կետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 9-րդ ենթակետով՝ հաստատել Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019թ. աուդիտի պայմանները՝ համաձայն հավելվածի:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն ամփոփեց Խորհրդի աշխատանքը և նիստը հայտարարեց փակված:

Խորհրդի նախագահ՝ **Գ. Մուրադյան**

Խորհրդի քարտուղար՝ **Գ. Հայրապետյան**